

ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՑԻ ՊԱՏՐԻԱՐԲ  
ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ



Ա.

ԺԷ. ԳԱՐՈՒՆ ՍԿԻՋԲԸ  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՔԱՐՈՁԻՉՆԵՐ

Ռուբինեանց հարստութեան շրջանին ազգին մէջ առաջին անգամ կը ծագէր կրօնական երկպառակութիւն մը, արեւմուտքէն եկած քարոզիչներու պատճառով:

Յաջորդ դարերու քաղաքական պատահարները այնքան աննպաստ դասաւորուած էին որ Հռոմ երբեմն մոռցաւ Արեւելքը կամ չկրցաւ անով զբաղիլ:

Օտար քարոզութիւններու հակազդելու ճիգերն ալ նոյն համեմատութեամբ տրկարացան Հայ Եկեղեցիին մէջ:

ԺԶ. դարուն վերջերը սակայն կացութիւնը փոխուեցաւ:

Հռոմ դարձեալ ուշադրութիւն դարձուց արեւելեան ժողովուրդներու վրայ:

Գրիգոր ԺԳ. պապը (1572-1585), Յիսուսեանց բարեկամը եւ պաշտպանը, որ Տրիտենտեան ժողովին մասնակցող եկեղե-